— Հասկանում եմ, հայր սուրբ, — նրա խօսքը լրացրեց Ասլանը: — Աշխարհական մարդուն անվայել է սուրբ գրքերը ձեռքով շօշափել...

Տաճարի պահարաններից մէկում, որ այլ անունով կոչւում էր աւանդատուն, դրած էր մի մեծ եւ ծանր արկղ սեւ փայտից: Ո՞ր ժամանակի գործ էր այդ արկղը, որտեղի՞ց էր բերուած՝ յայտնի չէր: Նրա մէջ պահւում էին վանքի սրբութիւնները. խաչեր, սուրբ նշաններ, պատած ոսկով եւ արծաթով, թանկագին անօթներ, որոնց թւում եւ պահւում էին սուրբ գրքերը: Վանահայրը ցոյց տուեց մեզ այդ գրքերից մէկը միայն, որ կոչւում էր «կարմիր Աւետարան», երեւի նրա համար, որ կարմիր ներկը նրա նկարների մէջ աւելի պայծառութեամբ աչքի էր զարկում եւ աւելի շատ էր գործածուել, քան թէ միւս ներկերը:

Երբ մտանք աւանդատունը, վանահայրը վառեց երկու մոմեր, մէկը տուեց իմ ձեռքը, միւսը՝ Ասլանի ձեռքը, եւ երեսը խաչակնքելով մօտեցաւ սեւ արկղին: Լուռ աղօթքներ կարդալով, բաց արեց նա արկղը եւ նրա միջից վեր առեց մի մեծ կապոց: Ես եւ Ասլանը մեր մոմերով առաջնորդեցինք նրան, մինչեւ նա դուրս եկաւ աւանդատնից, բերեց կապոցը եւ դրեց տաճարի սեղանի վրայ: Այժմ լսելի ձայնով մի շարական երգելով, սկսեց մէկ-մէկ բաց անել բազմաթիւ թաշկինակները, որոնց մէջ փաթաթուած էր «կարմիր Աւետարանը»: Թաշկինակները գոյնզգոյն էին, բոլորը մետաքսից: Նրանցից մի քանիսի վրայ երեւում էր կնոջ ձեռքի շնորհքը. նուրբ ասեղնագործութեամբ յօրինած զանազան նկարներ կամ սուրբ գրքերից խորհրդաւոր պատկերներ: Վանայ հարուստ «խօջաները», որ մի ժամանակ տարածուել էին աշխարհի ամէն կողմերը, արեւելքից եւ արեւմուտքից բերել էին այդ թանկագին ընծաները եւ նուիրել սուրբ Աւետարանին: Երբ վանահայրը բաց արեց գիրքը, թէ ես եւ թէ Ասլանը հիացած մնացինք, մագաղաթը այնքան բարակ էր եւ հարթ, ինչպէս ամենաընտիր թուղթ. նկարները սքանչելի էին, իսկ գրիչը վերին աստիճանի կանոնաւոր եւ գեղեցիկ: Իւրաքանչիւրի գլուխը զարդարած էր մի-մի պատկերով, որի միտքը առնուած էր նոյն գլխի բովանդակութիւնից: Կազմը ամբողջապէս արծաթից էր, թանկագին ակներով եւ հիանալի քանդակներով զարդարած: Մենք խորին ջերմեռանդութեամբ մօտեցանք եւ համբուրեցինք սուրբ գիրքը:

Ինձ ամենեւին հաճելի չթուեց այն խօսքը, որ ժամատնից դուրս գալու միջոցին Ասլանը ասաց ինձ.

— Իբրեւ հայոց գրչութեան եւ արհեստի մի գեղեցիկ օրինակ՝ այդ գիրքը անգնահատելի է: